ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6, 1961 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ե. Մ. Խալեյան

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԱԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՅ ՊԱՐՏԻԶԱՆՆԵՐԸ

Հայրենական Մեծ պատերազմում ֆաշիստական զավթիչների դեմ սովետական ժողովրդի տարած պատմական հաղթանակների մեջ մեծ է եղել նաև պարտիզանական շարժման դերը։

Հայրենական պատերազմի շրջանում օկուպացված շրջանների սովետական հասակավոր բնակչության մեծ մասը կամ անմիջապես դտնվում էր պարտիզանական ջոկատներում, կամ ակտիվ կերպով աջակցում էր ընդհատակյա հակաֆաշիստական պայքարին։

Ամենուրեք հողը այրվում էր ֆաշիստական օկուպանտների ոտքի տակ։ Վերածնվեցին ու բազմապատկվեցին քաղաքացիական կռիվների ժամանակվա սովետական պարտիզանների պանծալի տրադիցիաները։ Պատերազմի հենց սկզբից ժողովրդի ծոցից, պարտիական ու կոմերիտական կազմակերպությունների շարքերից դուրս եկան պարտիզանական ջոկատների ու միավորումների քաջարի հրամանատարներ, որոնց շուրջը համախմբվեցին Սովետական Միության բազմազգ ժողովուրդների տասնյակ հազարավոր ներկայացուցիչներ։ Բավական է ասել, որ հենց միայն Ուկրաինայում և Բելոռուսիայում պարտիզանների ընդհանուր թիվը հասավ մոտ կես միլիոնի։

Անմոռանալի են Սովետական Միության կրկնակի հերոսներ և գեներալներ Կովպակի, Ֆեոդորովի, Սովետական Միության հերոս գեներալներ Ռուդնևի, Կոզլովի, Գերմանի, Վերշիգորայի, Նաումովի ու մյուսների ղեկավարած պարտիզանական միավորումների կատարած պանծալի գործերը։ Նրանք տասնյակ հազարավոր կիլոմետրերով մարտական ուղիներ կատարեցին թշնամու խոր թիկունքում, օկուպացված սովետական տերիտորիաներում, իրենց վրա գրավելով թշնամու մեծ ուժեր՝ իրենց ձեռքին պահելով ամբողջ պարտիզանական երկրամասեր։ Այդպիսի երկրամասեր գոյություն ունեին Ուկրաինայում, Բելոռուսիայում, Լենինգրադի մարզում, Բրյանսկի ու Սմոլենսկի անտառներում և այլուր։

Պարտիզանները անակնկալ հարձակումներով ջախջախում էին գերմանա-ֆաշիստական բանակի կենդանի ուժն ու տեխնիկան, նրանց տեղական կայազորները, խորտակում ռազմական բեռներով ու զենքով բարձված գնացքները, խափանում համայրումների ու սպառազինության փոխադրումը գերմանա-սովետական ռազմաճակատ։ Օկուպացված շրջաններում մասսայականացնում էին Սովինֆորմբյուրոյի հաղորդումները Կարմիր Բանակի հաղթանակների մասին, ճամբարներից ազատում սովետական գերիներին, խափանում սովետական մարդկանց Գերմանիա ստրկական աշխատանքի քշելու գործը։

Պարտիզանական շարժման մեջ իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան նաև հայ ժողովրդի բազմաթիվ զավակներ, որոնց ճնշող մեծամասնությունը գերմանական գերությունից իրենց ընդհատակյա հակաֆաշիստական կազմակերպությունների ղեկավարությամբ պարտիզանների մոտ փախած Սովետական բանակի նախկին մարտիկներ ու սպաներ էին։

Ինչպես բուն Գերմանիայում, այնպես էլ օկուպացված տերիտորիաներում համակենտրոնացման և աշխատանքային ճամբարներում, ազգային լեգեոնների բատալիոններում բազմաթիվ հայ ռազմագերիներ ընդգրկվեցին ընդհատակյա հակաֆաշիստական կազմակերպությունների մեջ։

Հայ ռազմագերիներից հակաֆաշիստական առաջին կազմակերպության ակտիվ գործիչներից են եղել 113-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Քրիստափոր Ալահվերդյանը, Կարմիր բանակի կադրային սպա, փոխգնդապետ Մուշեղ Մալխասյանը, Բրեստի պաշտպանության ակտիվ մասնակից, գնդի կոմերիտական կազմակերպիչ Սամվել Մաթևոսյանը, Երևանի Ս. Ալինյան պարտշրջկոմի նախկին աշխատակից Ժորա Հարությունյանը և ուրիշներ[1]։

Ալահվերդյանը Համմելբուրգի ինտերնացիոնալ սպայական ռազմագերիների ճամբարում գեներալ-մայոր Իվան Նիկիտինի, Նիկոլայ Պանասենկոյի և մյուսների հետ միասին դարձավ սովետական ռազմագերիների ընդհատակյա կազմակերպության կոմիտեի անդամ։ Նա կազմակերպության մեջ ընդգրկելով մեծ թվով սպաների, նրանց շարունակ հիշեցնում էր, որ իրենց համար ևս պատերազմը դեռ չի ավարտվել։ Պայքարը կշարունակեն, չեն արատավորի սովետական սպայի բարձր կոչումը։

Ալահվերդյանը բանավոր պրոպագանդա էր վարում, գրում էր հակաֆաշիստական կոչեր և կազմակերպության միջոցով տարածում ռազմագերիների մեջ։ Ռազմագերիներին զգուշացնում էր չընկճվել, ծառայության չմտնել ֆաշիստների մոտ, ուժով աշխատանքի կամ ազգային լեգիոն տարվելու դեպքում, դիվերսիաներ կատարել, զենքը ուղղել ֆաշիստների դեմ և միանալ պարտիզաններին։

Գեստապոն շուտով Ալահվերդյանին փոխադրում է Նյուրնբերգյան բանտ, որտեղ 1941 թ. դեկտեմբերին սովետական մի այլ գեներալի՝ Ի. Նիկիտինի հետ միասին, ծանր խոշտանգումների ենթարկելուց հետո՝ գնդակահարվում է[2]։

Հայ ռազմագերիները ընդհատակյա ուժեղ կազմակերպություններ ունեին լեհական քաղաքներ՝ Դիմբլինի, Լոխվիցայի, Կելցի ռազմագերիների ճամբարներում, հայ լեգիոնների Պուլավայի հավաքակայանում և ուրիշ տեղերում։

Դիվերսիոն ակտիվ գործեր կատարեց Բեռլինի մոտ Վուստրաուի և ապա Սիլեզիայի Հիրշբերգ քաղաքի ճամբարի հայ ռազմագերիների հակաֆաշիստական խումբը, որ ստեղծվել է 1942/43 թթ. պարտիայի անդամ Վաղարշակ Առաքելյանի և Ջարտո Խաչատրյանի նախաձեռնությամբ։ Խումբը աստիճանաբար նոր ռազմագերիներ ընդգրկելով իր շարքերում, նրանց միջոցով ընդհատակյա գործունեություն ծավալեց նաև Բեռլինում, Վերին Սիլեզիայում

[1] Այստեղ և հետագայում օգտագործված են Հայկ. ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի Հայրենական Մեծ պատերազմի պատմության կաբինետի արխիվի նյութերը։

[2] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս «Красная звезда» №№ 199—202, օգոստոս 1958։

գտնվող հայ ռազմագերիների մեջ։ Այդ խմբի ակտիվ անդամներից էին՝ Վահան Սարգսյանը, Վաղարշակ Աբրահամյանը, Հայկազ Պողոսյանը, Գևորգ Սարդսյանը, Արամ Ավետիսյանը, Ժորա Գևորգյանը, Սերյոժա Հովակիմյանը, Վահրիճ Մարտիկյանը (Հայրապետյան), Փափագ Հովհաննիսյանը, Հայկարամ Մարտիրոսյանը, Գարեգին Համբարյանը և ուրիշներ։ Խմբին իր ցուցումներով ու խորհուրդներով զգալի օգնություն է ցույց տվել սովետական գեներալ Ֆ. Մ. Լակինը։

Հիրշբերգի խմբի անդամները, որ աշխատում էին օպտիկական ապակու գործարանում, հաճախակի կոտրելով ու փչացնելով մեքենաները, խափանում էին արտադրությունը։ Նրանք նույնիսկ ստեղծել էին իրենց պրիմիտիվ անլեգալ տպարանը, որի միջոցով բաց էին թողնում հակաֆաշիստական թռուցիկներ ու տարածում ռազմագերիների մեջ։

Խմբի կապերը շարունակ ընդլայնվում են։ Նրանք կապեր են ստեղծում գերմանացի կոմունիստների ու լեհական բանվորական պարտիայի և օտարերկրյա այլ հակաֆաշիստների ընդհատակյա կազմակերպությունների հետ և մասնակցում ռազմաճակատ զենք ու սպառազինություն փոխադրող գնացքների խորտակելուն և այլ դիվերսիոն ակտերի։

Կազմակերպության առաջադրանքով Առաքելյանը 1944 թ. աշնանը, կարևոր տեղեկություն հաղորդելու համար, Լեհաստանի վրայով անցնում է ռազմաճակատի գիծը, միանում Ուկրաինական Առաջին ռազմաճակատի զորքերին։ 1945 թ. հունվարին նա ռազմաճակատի հրամանատարության նոր առաջադրանքով՝ իր օգնականներով իջնում է թշնամու թիկունքը՝ Նեյորպին քաղաքը և հետախուզական աշխատանք կատարում։ Առաքելյանը այդ աշխատանքի մեջ է ընդգրկում նաև Բեռլինի, Հիրշբերգի և Նեյորպինի ճամբարների իր խմբի անդամներին՝ Վահան Սարգսյանին, Զարտո Խաչատրյանին, Գարեգին Համբարյանին, Հայկազ Պողոսյանին, Գևորգ Սարգսյանին, Շուշիկ Ստեփանյանին, Զավարդ Դոլուխանյանին և տասնյակ ուրիշների։ Գեստապոն, չնայած դավաճանների մատնությամբ ձերբակալություններ էր կատարել և գնդակահարել մի խումբ ռազմագերիների՝ Սարգիս Խաչատրյանին, Ենոք Պետրոսյանին, ուզբեկ Համզո Ուզուբաևին, ռուս Վլադիմիր Եգորովին, Կազանի թաթար Սերգեյ Մուխամետշին և ուրիշներին, բայց կեղծանի մնացած ընկերները խիստ կոնսպիրացիա սահմանելով, շարունակել էին ընդհատակյա պայքարը։ Նման ընդհատակյա հակաֆաշիստական պայքար էր տարվում նաև մյուս ճամբարներում և զենքի ուժով հայ ռազմագերիներից ստեղծված ազգային լեգիոններում։ Ռազմագերիները հարմար առիթներով ֆաշիստական գերությունից մասսայական փախուստներ կատարելով համալրում էին պարտիզանական միավորումների ու ջոկատների շարքերը։ Ի դեպ, հիշենք, որ նրանք անցում կատարում էին ամբողջ զորամասերով, իրենց հետ բերելով զենքեր և այն ուղղում հիտլերականների դեմ։

Պատերազմի սկզբից Ուկրաինայում, Բելոռուսիայում, Բրյանսկի ու Սմոլենսկու անտառներում, Ղրիմում ու Հյուսիսային Կովկասում գործում էին հզոր հայ պարտիզաններ։ 1943—1944 թվականների ընթացքում հենց միայն Ուկրաինայի 18 խոշոր պարտիզանական միավորումների ու ջոկատների շարքերում թշնամու դեմ կռվում էին ավելի քան 600 հայ պարտիզաններ։

Սովետական Միության հերոս Վերշիգորայի ղեկավարած Կովպակի անվան ուկրաինական առաջին պարտիզանական դիվիզիայի շարքերում է գոր-

ծել հայ պարտիզաններից բաղկացած «Հաղթանակ» վաշտը, որի հրամանատարն էր Երևանի Ստալինյան շրջկոմի աշխատակից Սերգեյ Հարությունյանը։ Հայ պարտիզանների այդ խումբը, մեկ ամբողջ տարի ինքնուրույն գործելուց հետո, 1944 թ. հունվարին միացել է կովպակյան դիվիզիային, դառնալով նրա վաշտերից մեկը։ Վաշտի սկզբնական կազմում էին գտնվում՝ Բագատ Գալստյանը, Հովհաննես Պետյանը, Անտոն Պողոսյանը, Հակոբ Հակոբյանը, Լորիս Ամիրյանը, Սերգեյ Խալաթյանը, Ալո Ֆահրադյանը, Երվանդ Ղասաբյանը, Արիստակես Կլեկչյանը, Միխայիլ Սխիթարյանը և ուրիշներ։

Վաշտը կովպակյան միավորման կազմում կատարել է ավելի քան 4000 կիլոմետր մարտական արշավ և աչքի ընկել բազմաթիվ մարտերում։

Ուկրաինայում ամենախոշոր հայկական ջոկատներից մեկն է եղել նաև 325 ռազմիկներից բաղկացած Ա. Միկոյանի անվան պարտիզանական ջոկատը, որը 1943—1944 թթ. գործել է Սովետական Միության հերոս գեներալ-մայոր Մ. Նաումովի հեծյալ պարտիզանական բրիգադի կազմում՝ ավագ լեյտենանտ Արամայիս Հովսեփյանի հրամանատարությամբ։ Ջոկատի կոմիսարն էր Յուրի Պավլովսկին, պարտկազմակերպիչ Ժորա Բաղդասարյանը, ակտիվ պարտիզաններից են եղել Սուխարիչ Հարությունյանը, Բակունցը, Ազոյանը, Արաջյանը, Վարազդատ Հովհաննիսյանը, Դուրուխյանը, Վերա Հովսեփյանը և մյուսները։ Միավորման կազմում ջոկատը հերոսական մարտեր է մղել Կիևի, Ժիտոմիրի, Կովելի, Լվովի, Լյուբլինի մարզերում։ Գեներալ Նաումովը հպարտությամբ էր նշում, որ «Միկոյանի ջոկատը լավ է հարվածում գերմանացիներին... Նա իմ լավագույն և փառաբանված ջոկատներից մեկն է բրիգադումս։

Հայ պարտիզաններ կային նաև «Կիրովի», «Կլետսկի», «Աշորսի» և Կիրովոգրադի անտառում գործած Վորոշիլովի անվան և մյուս միավորումներում։ Վորոշիլովի անվան ջոկատում փառավոր ուղի են անցել պարտիզաններ Գալուստ Ստեփանյանը (ստորաբաժանման հրամանատար), Թորոսյանը, Հակոբյանը և ուրիշներ։

Ուկրաինական ժողովուրդը մշտապես սիրով ու հարգանքով է հիշում նրանց։ 1955 թ. նոր տարվա առթիվ պարտիայի Կիրովոգրադի մարզկոմի քարտուղար Մարտինովը Գալուստ Ստեփանյանին ուղարկած շնորհակալական հեռագրում գրել է. «Կիրովոգրադի աշխատավորները սրբությամբ են մեծարում գերմանա-ֆաշիստական օկուպանտների դեմ անձնվիրաբար պայքարած պարտիզանների հիշատակը ընդհանուր թշնամու դեմ մղված պայքարում։ Ռուս, ուկրաինացի, հայ և մյուս ժողովուրդների լավագույն զավակների թափած արյունը ավելի ամրապնդեց Սովետական Միության ժողովուրդների լենինյան բարեկամությունը»։

Բելոռուսական պարտիզանների շարքերում՝ իրենց ակտիվ պայքարով մեծ համբավ հանեցին Գեորգ Դեմուրյանը, Նիկոլայ Վահանովը, Գրոդնո քաղաքի ընդհատակյա կազմակերպության հիմնադիրներից Գուրգեն Մարտիրոսյանը, Բրեստի ամրոցի նախկին պաշտպաններից Սամվել Մաթևոսյանը և ուրիշներ։

Պարտիզանական կռվի մեջ հերոսի մահով զոհվեցին Կովպակի և Նաումովի միավորման բազմաթիվ հայ ռազմիկներ։ Գեներալ Վերշիգորան առանձին սիրով խոսելով նրանց մասին գրել է. «Ուկրաինայի և Բելոռուսիայի տափաստաններում հայերը պաշտպանում էին մեր ընդհանուր գործը... պայքարում հերոսի մահով ընկան ընկ. ընկ. Մաթևոս Խաչատրյանը, Սամսոն Մաթևոսյանը,

Գևորգ Օհանյանը, Ռաֆիկ Սահակյանը, Ժորա Հարությունյանը, Միքայել Գրիգորյանը, Սուխարիչ Հարությունյանը և ուրիշներ։

Ուկրաինական հողը թող թեթև լինի նրանց վրա...»։

Թշնամու ձեռքն ընկան և գեստապոյի կողմից գնդակահարվեցին Ղրիմի ակտիվ հայ պարտիզաններից Սուրեն Պողոսյանը, Աշոտ Հայրապետյանը, Սինֆերոպոլի ընդհատակի կազմակերպություններից՝ Հրանուշ Մխիթարյանը, որը հակաֆաշիստական թռուցիկներ էր տարածում, պարեն ու զինամթերք էր մատակարարում պարտիզաններին, մասնակցում էր գնացքների խորտակելուն և այլ դիվերսիոն գործողություններին։

Մեծ թվով հայ պարտիզաններ փառավոր գործողություն հանդես բերին Լենինգրադի և Կալինինի մարզերում, Սովետական Միության հերոս Գերմանի անվան պարտիզանական 3-րդ բրիգադում։ Բրիգադի 41-րդ ջոկատը կազմված էր հայ ռազմիկներից, որի մարտական հրամանատարն էր կադրային սպա Արտեմ (Հարություն) Սաղումյանը։ Մարտերում իրենց խիզախություններով աչքի են ընկել Մ. Մկրտումյանը, Ս. Օգանովը, Ժ. Ավչինյանը, հերոսի մահով զոհված Ջավեն Համբարձումյանը և ուրիշներ։

Ջոկատը 1943 թ. մարտի 1-ից մինչև 1944 թ. մարտի 14-ը ոչնչացրել է 2004 հիտլերական զինվոր ու սպա, խորտակել է 25 էշելոն, ջախջախել 73 ավտոմեքենա, 27 մոտոցիկլետ, 15 ավտոռուս, պայթեցրել երկաթգծեր, ոչնչացրել մեկ ֆաշիստական կայազոր և այլն։

Հայ պարտիզանները միայն գերությունից փախած ռազմիկները չէին, կային նաև մեծ թվով պարտիայի հանձնարարությամբ թշնամու թիկունքում աշխատանքի գործուղված և կամավոր կերպով պարտիզանական շարժման մեջ ընդգրկված սովետական հայրենասերներ։

Պարտիայի առաջադրանքով Բելոռուսիայի և Լենինգրադի մարզերում պարտիզանական միավորումներ կազմակերպողներից մեկն է եղել Սովետական Միության, իսպանական և Չինաստանի քաղաքացիական կռիվների մասնակից, Հայրենական պատերազմի մի շարք ռազմաճակատների ռազմական խորհրդի անդամ, գեներալ-մայոր Հայկ Թումանյանը։ Կրասնոդոնի «Երիտասարդ գվարդիա» ընդհատակյա կոմերիտական կազմակերպության ակտիվ անդամներից են Մայա Պագլևանովան և Ժորա Հարությունյանցը։ Մայան կազմակերպության անդամների հետ ձերբակալվեց, բայց նա մինչև իր վերջին շունչը հավատարիմ մնաց հայրենիքին և երդմանը։ Նրան իր մյուս ընկերների հետ միասին գեստապոն ծանր խոշտանգումների ենթարկելուց հետո գնդակահարեց։ Մայան հետմահու պարգևատրվեց Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով։ Կամավոր պարտիզաններից էր Մերձբալթիկայում գործած Մանավազ Հասրաթյանը, Բելոռուսիայում գործող հայ պարտիզաններից՝ Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրված Գևորգ Դեմուրյանը, 208-րդ պարտիզանական գնդի շտարի պետ գնդապետ Վահագն Հայրապետովը, Կարմիր աստղի շքանշանով պարգևատրված Նիկոլայ Վահանովը և ուրիշներ։

Պատերազմի ընթացքում Գերագույն Գլխավոր հրամանատարության և պարտիզանական կենտրոնի կապը պարտիզանական միավորումների հետ իրականացվում էր ավիացիայի միջոցով։ Այդ կապի համար առանձնացված էին հեռավոր թռիչքի խիզախ և հմուտ օդաչուներ։ Այդ խիզախների մեջ կային նաև հայ օդաչուներ՝ Ռաֆայել Գարրիելյանը, մայոր Աշոտ Գասպարյանը, կապիտան Գարեգին Բաղդասարյանը, որոնք հաղթահարելով անասելի դժվա-

ություններն ու վտանգ, ռազմամթերք ու հրամանատարական կադրեր էին հասցնում Կովպակի, Նաումովի, Կոզլովի և մյուս միավորումներին, բուժվելու համար «Մեծ երկիրն» էին փոխադրում վիրավոր պարտիզաններին։ Օկուպացված սովետական տերիտորիաները ողողում էին ագիտացիոն գրականությամբ ու թերթիկներով։ Նրանք բոլորն էլ պարգևատրվեցին պարտիզանական առաջին աստիճանի մեդալով ու այլ շքանշաններով։

Այսպես, ողջ սովետական պարտիզանների հետ միասին մարտական փառքի ուղի անցան նաև հազարավոր հայ պարտիզաններ, որոնք 1944 թ. աշնանից սովետական տերիտորիայի ազատագրվելուց հետո, համալրելով Կարմիր Բանակի շարքերը, մասնակցեցին ֆաշիստական Գերմանիայի և ճապոնական իմպերիալիստների վերջնական ջախջախման ճակատամարտերին։

Ֆաշիստական զավթիչների դեմ մղած պատերազմում անմասն չմնացին նաև սփյուռքահայերը։ Նրանք հայրենասիրաբար պաշտպանելով իրենց Մայր Հայաստանը, միջոցներ հավաքեցին «Մասունցի Դավիթ» և «Բաղրամյան» տանկային շարասյուններ կառուցելու համար։ Նրանցից շատերը զենքը ձեռքին ֆաշիզմի դեմ կռվեցին դաշնակիցների բանակներում, պարտիզանական ջոկատներում, պայքարեցին ֆաշիզմին ծախված դաշնակցության դեմ։ Հակաֆաշիստական պայքարի դրոշակակիր դարձավ կոմունիստ բանաստեղծ Փարիզի «Ինտերնացիոնալ» պարտիզանական ջոկատի արիասիրտ հրամանատար, 1944 թ. փետրվարին գեստապոյի կողմից գնդակահարված Միսաք Մանուշյանը։

«Հայ ժողովուրդը իրավունք ունի հպարտանալու Մանուշյանի խմբի հերոսներով,— գրել է Ֆրանսիայի Կոմպարտիայի Կենտկոմի քարտուղար Ժակ Դյուկլոն,— նրանց պանծալի սխրագործությունը չի մոռացվի և մենք մեծ պոետ Վիկտոր Հյուգոյի հետ միասին կարող ենք այդ հերոսներին ասել «մեռածներ» ինչպես ողջերը, մասնակցում են մեր մարտերին»։

Ֆրանսիայում դիմադրական ուժերի հակաֆաշիստական պայքարի մեջ ակտիվ գործունեություն ցուցաբերեցին մեծ թվով ֆրանսահայ կոմունիստներ, ինչպես Շահեն Տատուրյանը, Մելինե Մանուշյանը, Նոյեմ Հարությունյանը, Սիրաք Բաղդասարյանը, Գեղունին, Մարտիկյանը, Տերտերյանը, Լասը (այս երկուսը գնդակահարվել են գեստապոյի կողմից) և ուրիշներ։

Մեծ թվով հայ պարտիզաններ են մարտնչել ֆաշիզմի դեմ նաև Բուլղարիայի, Հունաստանի, Հարավսլավիայի, Չեխոսլովակիայի պարտիզանական ջոկատներում։ Բուլղարահայ աշխատավորությունը հպարտությամբ է հիշում իր 19-ամյա հերոս պարտիզանուհուն՝ Հերմինեին («Սաշկային»), որն արիությամբ կռվեց և հերոսի մահով զոհվեց։

Արտասահմանում ֆաշիզմի դեմ մղվող պայքարում մեծ և փառավոր ուղի է անցել նաև օկուպացված Ֆրանսիայի հարավում գործող սովետական պարտիզանների խումբը, որի մեջ մտնում էին Ֆրանսիայում գերմանական համակենտրոնացման ճամբարներից ու ազգային լեգեոններից փախած սովետական հայ ռազմագերիներ։

1944 թվականին ֆրանսիական պարտիզանական խմբերում էին գործում մեծ թվով սովետական հայ պարտիզաններ, գոյություն ունեին նույնիսկ նրանց ինքնուրույն պարտիզանական ջոկատներ։ Հարավային Ֆրանսիայում այդպիսի պարտիզանական ջոկատներից մեկը ղեկավարում էր Սովետական Բանակի սպա, Կարմիր դրոշի շքանշանակիր Բարթուղ Պետրոսյանը։

1944 թվականի օգոստոս-սեպտեմբերին սովետական պարտիզաններից կազմվեց Ֆրանսիայում գործող սովետական առաջին պարտիզանական գունդը։ Գնդի հրամանատար նշանակվեց Սովետական Բանակի կադրային սպա, մայոր Ալեքսանդր Ղազարյանը, հրամանատարի տեղակալ՝ կապիտան Բարթուղ Պետրոսյանը, կոմիսար՝ Լևոն Տիտանյանը, շտաբի պետ՝ Դավիթ Մինասյանը. գնդում ղեկավար գործիչներից էին նաև Ստեփան Յաղջյանը, Հրանտ Հովհաննիսյանը, Վահան Օգանյանը և մյուսները։ Հետագայում գնդին միացան ֆրանսիական ջոկատներում գտնվող ակտիվ հայ պարտիզաններ՝ Ռուբեն Մանուկյանը, Գրիգոր Մխիթարյանը և շատ ուրիշներ։ 1944 թվականին գունդը արդեն իր կազմում ուներ մոտ 2000 հայ ռազմիկներ։

Ինչպես գերության մեջ գտնվելու ժամանակ, այնպես էլ պարտիզանական յարժման շրջանում նրանք համագործակցում էին ֆրանսիական Կոմպարտիայի և նրա հայկական սեկցիայի հետ։

Հայ պարտիզանները հիմնականում զինված էին գերմանացիներից խլած զենքով։ Նրանք ձեռք-ձեռքի տված ֆրանսիական պարտիզանների հետ, մարտեր էին մղում ֆաշիստական օկուպանտների դեմ։ Հայ պարտիզանները մարտական մեծ գործողություններ ծավալեցին Գար և Լոզեր դեպարտամենտներում։

1944 թ. օգոստոսի 24-ից մինչև 28-ը գնդի գումարտակներից մեկը Բարդուղ Պողոսյանի հրամանատարությամբ Լաքալմենթի տակ մեծ սխրագործություն կատարեց, նա գիմադրեց գերմանական մի խոշոր զորախմբի, որը նահանջելով Հարավային Ֆրանսիայից, կատաղությամբ ավերում էր ճանապարհին պատահած քաղաքներն ու բնաջնջում բնակչությանը։ Բարբարոսական ավերածություններից, մասսայական բնաջնջումից ազատվեցին Ֆլորակ. Այնս, Նիմ, Մանդ և մյուս քաղաքներն ու շատ բնակավայրեր։

Լաքալմենթի քաղաքագլուխ Մարսել Ռոժեն պարտիզաններին ուղղած շնորհակալության մեջ գրում է. «Բնակչությունը տեսավ հայկական խմբի հերոսական պայքարը գերմանացիների դեմ. խումբը կռվեց հմտությամբ և համարձակությամբ, սառնասրտությամբ և քաջությամբ իրենից հարյուր անգամ թվով գերազանցող ուժերի դեմ»[1]։ «Սովետական ռազմիկները կռվեցին առյուծի պես»,— գրել է դիմադրական ուժերի կոմունիստ ղեկավարներից Գարրիել Մարտին։

Այս և մյուս մի շարք մարտերում իրենց անձնական խիզախություններով աչքի ընկան շատ մարտիկներ ու հրամանատարներ՝ Վահան Օհանյանը, Հրանտ Հովհաննիսյանը, Բրեստի պաշտպանության մասնակից Սոս Նուրիջանյանը և շատ ուրիշներ։ Քաջի մահով կռիվներում ընկան շատ հայ պարտիզաններ[1]։

Ֆրանսիացիները ամենուրեք գրկաբաց էին ընդունում սովետական պարտիզանական գնդի մարտիկներին, նրանց համարելով իրենց ազատարարները։ Ֆրանսիական Կոմունիստական պարտիայի կենտրոնական օրգան «Յումանիս.ե» թերթը իր էջերում հոդվածներ էր զետեղում հայ պարտիզանների մարտական գործողությունների և կատարած խիզախությունների մասին։ Ֆրանսիայի Կոմունիստական աաոտիան արտահայտելով իր ժողովրդի կամքը, բարձր

[1] Նիմ քաղաքից 12 կմ հեռու Լաքալմենթ գյուղի գերեզմանատանը եղբայրական մի շիրիմի վրա արձանագրված է. «Հավերժ փառք Ֆրանսիայի ազատագրման համար ֆաշիզմի դեմ մղված մարտում զոհված սովետական պարտիզանների հիշատակին Վարդանով Պետր. 1909—1944 թթ., Բայոնին Նիկոլայ, 1920—1944 թթ., «Գրավգաս», 17 դեկտեմբերի. 1959 թ.

գնահատության արժանացրեց սովետական պարտիզանների ներդրած ավանդը ֆաշիստական օկուպանտների ջախջախման, Ֆրանսիայի ազատագրության գործում։

1960 թ. մարտին Խրուշչովը, Ֆրանսիա այցելած ժամանակ, եղավ Նիմում, իր ճառում ասաց. «Ողջույն ֆրանսիական փառապանծ բոլոր պարտիզաններին, որոնց հետ սովետական մարտիկները կողք-կողքի մարտնչել են պարտիզանական ջոկատներում», իսկ Ռեյմս քաղաքում մարտի 29-ին պսակ դրեց զոհվածների շիրիմին և ասաց. «Ես գլուխս խոնարհում եմ սովետական այն զինվորների առջև, որոնք փախել են հիտլերյան գերությունից և Ֆրանսիայի պարտիզանների հետ մեկտեղ մարտնչում էին ընդհանուր թշնամու դեմ Ֆրանսիայի հողում երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ։

Ֆրանսիայի ազատագրումից հետո գունդը հայ և ֆրանսիացի բնակչության մեջ ծավալեց կուլտուր-լուսավորական աշխատանքներ։ Բասախոսությունների, երեկույթների միջոցով պարտիզանները նրանց ծանոթացնում էին Սովետական Միության և Սովետական Հայաստանի նվաճումների, ժողովրդի կյանքի հետ։ Իրենց ինքնագործ խմբակների միջոցով տարբեր քաղաքներում համերգներ ու ներկայացումներ կազմակերպեցին, որից գոյացած մի քանի միլիոն ֆրանկ դրամը մուծեցին ՍՍՌՄ պաշտպանության ֆոնդին։ Գունդը ակտիվորեն աջակցում էր պատերազմի շրջանում գերմանացիների կողմից Ֆրանսիա տարված սովետական քաղաքացիներին հայրենիք վերադառնալու գործին։ Վերադարձվեցին 30.000 քաղաքացիներ։

1945 թ. մայիսին Նիմ քաղաքում ֆրանսիական կառավարությունը, դիմադրական ուժերի զորահանդեսում, որին ներկա էին նաև ՍՍՌՄ դիվանագիտական ու ռազմական ներկայացուցիչները, սովետական հայ պարտիզանների գնդին հանձնեց ֆրանսիական մարտական դրոշակ և արծաթյա աստղով պատերազմական խաչ շքանշան։ Զորահանդեսում ճառով հանդես եկավ Եվրոպայում ՍՍՌՄ ռազմական միսիայի քաղ. տեղակալ գեներալ Վիխրևը. նա ողջունեց պարտիզաններին՝ հաղթանակների և մարտական դրոշ ստանալու առթիվ։

Գնդի անձնակազմից մի քանի հարյուր հրամանատարներ ու մարտիկներ պարգևատրվեցին ֆրանսիական մարտական շքանշաններով։ Գունդը դրոշներ ստացավ նաև Լիոնի կոմունիստական կազմակերպություններից և ֆրանսիական պարտիզաններից։ 1945 թ. օգոստոսին գունդը որպես Սովետական Բանակի մարտական միավորի, զինված վերադարձավ Հայրենիք, իր հետ բերելով մարտական դրոշակներ, որոնք այժմ ցուցադրված են Մոսկվայի Սովետական Բանակի Կենտրոնական թանգարանում։

Հայ ժողովուրդը հպարտ է իր պարտիզան զավակներով, որոնք Սովետական Հայրենիքի պաշտպանության համար, անձնվիրաբար կռվեցին գերմանական ֆաշիզմի դեմ և իրենց կյանքով ու արյունով արագացրին հաղթանակը։